


ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ
Ե. ԹՈՐՈՏՅԱՆ

Կամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել առ
Տնօրին ԱՐՇԱՆՈՅՍ քաղաքի
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՍ.ԱՄ.Թ. ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՉԱՄՍՐ	
Տարեկան ողջ դասիկե.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴԵՐ	
Տարեկան Գրական	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՆԻՎ
Եւ թղթատարի ծախքը
Խնդրագրութեան վրայ է :

Խնդրագրութեան ուղղութեամբ
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են

E. TOROSJIAN
Direc.-propr. du journal arménien
ARCHALOUSYCE
LE CAIRE (EGYPTE)

ԽՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ Պատ. քաժա...
Նորոգելու, ջերմասպես կը խնդրուի որ քան
... անհատիկ նախորդ տարիէն մնացեալ պար
... անց կցելով որ կեղ նախ իրենց ԵՐԿՐՈՐԴ
Տարեկանի քաժանորդակիր, եւ հարկ
... իր քողով մասնաւոր դիմումներու, որոնք
... նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ
... ՆՈՅՍԻ արդէն բազմազարդ Տնօրինութեան :

ՔԱՆՆԵՐՈՐԴ ԴԱՐԸ

(Շարեւ. նախորդ թիւէն եւ վերջ)

Անցեալը յարգելը լաւ է, բայց զայն
պաշտելու չ'ենք, ինչպէս կ'ընեն Չինացի
տանցիքը : Անցեալին մերթ ընդ մերթ ակ
նարկ մը նետելը կրնայ մեզ գրգռու մը ըլ
լալ աւելի յառաջանալու եւ զարկ մը տալ
մեր ջանքերուն : սակայն երբ անցելոյն
մէջ մեր ունեցած փառաւոր յաջողութիւն
ներէն արքայու, կը մոռնանք ներկայն եւ ա
պագայն եւ կը կենանք ուր որ ենք՝ ան
ատեն վայ մեզի : փոխանակ անդամալու
ծելու՝ թող անսնք քաջալերեն եւ խրա
խուսեն մեզ նոր քայլեր առնելու : Մենք
իր արգ գէշ սովորութիւն մը ունինք :
անցեալին անյաջողութիւններուն վրայ կ'ող
բանք ու կը լալուրճկինք, այն աստիճան
որ մեզ վճատութիւն մը կը պատէ, եւ
ընդհակառակը յաջողութիւնները չ'ափազանց
փայլուն գոյններով կը տեսնենք : Այս ու
նակութիւնը մեզմէ թօթափելու ենք մի
անգամ ընդ միշտ եւ երեսնիս դէպի ապա
գան դարձուցած եւ աչքերնիս կէտի մը վրայ
սեւեռած ընտրուած նպատակի մը համար
վազելու ենք :

Կրկին, քսաներորդ դարուն սեմէն
ներս մտած ատեն յիշենք սա կարևոր կէ
տը թէ՛ մեզ Հայերուս համար խիստ կեն
սական խնդիր մըն է փոխադարձ աջակ
ցութեան խնդիրը : Ամենուս յայտնի է թէ
ինչ աստիճան կարօտ ենք այս առաքինու
թեան : Յաւալի է որ չենք կրնար պարծիլ
անով իբր մեր ազգային յատկանիշներէն
մին : Անոր բացակայութիւնը խիստ ակնե
րեւ է մեր մէջ : Թէեւ այս նիւթին վրայ
յաճախ գրուած է, բայց որչափ ալ աւելի
գրուի, տակաւին տեղ կայ : Աստուած
այնպէս կարգադրած է այս աշխարհը, որ
եթէ իւրաքանչիւր ոք կրէ իր բեռը առանց
ուրիշին օգնելու, արդիւնքը տրամուծիւն

եւ վճատութիւն կ'ըլլայ : Իսկ իրարու նե
ղութիւնները կրելով՝ երկուստեք խաղա
ղութիւն եւ բերկրանք կ'ունենանք : Իր ան
ձին մէջ կեդրոնացած եւ անջատեալ կենսքը
բոլոր ընկերական հաճոյքներէ զուրկ է :
Այս մասին մեր թերութիւնը այնչափ ակ
նեւրէ չէ, որովհետեւ ընկերական ժողովուրդ
մը կը նկատուինք : բայց կայ կէտ մը որուն
մէջ մեր յանցանքը գոցել չենք կարող :
չափազանց օտարամոլ ենք : Փոխադարձ
աջակցութեան յատկութեան ոչ թէ բոլոր
ըովին զուրկ ենք, այլ զայն կը կիրարկենք
օտարներուն հետ մեր ունեցած յարաբե
րութեանը մէջ միայն : Խիստ տխուր եւ
հասարակ երեւոյթ մըն է մեր մէջ խաբելու
աշխատիլ զիրար, երբ իրարու հետ գործ
կ'ունենանք : Հայ մը Հայուն հետ առեւ
տուր մը ընելով շատ քիչ անգամ գոհ մնա
ցած է : Ինչո՞ւ արդեօք : միթէ օտարէն
կը վախնանք եւ կ'ամաչենք եւ մեր ազգա
կիցները բանի տեղ չ'ենք դնել : Գոնէ
այս մասին Հրէաներէն դաս մը առնենք,
որ թէեւ շատ բաներու մէջ մեզմէ խիստ
ստորին են, բայց զիրար յարգելու, իրա
րու օգնելու եւ իրարմէ օգտուելու մէջ կըր
նան մեզի օրինակ հանդիսանալ :

Հրէից ընդունած եւ ի գործ դրած տոհ
մային պատուէրներէն մին է բնաւ չ'խա
բել եւ չ'կողոպտել իր արեւակիցները : Ընդ
հակառակը կարգալով իրենց ազգային պատ
մութեան մէջ այն համարը թէ՛ Մովսէս իր
ժողովուրդին պատուիրեց եզրպտոսէ՝ դե
րութեան երկրէն ելած ատեն խնդրել ե
զիպտացիներէն « արծաթեղէն զարդեր եւ
ոսկեղէն զարդեր եւ հանդերձներ » եւ Տէրն
ալ ի նպատակ անոնց շնորհք գործել տուաւ
եզրպտացոց առջևը, « անանկ որ եզրպ
տացիք անոնց խնդրածը տուին, եւ անոնք
կողոպտեցին եզրպտացիները » կը հասկնան
թէ միշտ իրաւունք ունին կողոպտել « ե
զիպտացիները » — օտարականները — երբոր
պատեհութիւն եւ միջոց գտնեն : Ատոր ճիշտ
հակառակը կը կարդանք մենք մեր պատ
մութեան մէջ : հոն կը տեսնենք թէ եր
բոր Հայը ուզած է մարդկային այս յոռի
յատկութիւնը մարդել՝ իր փորձերը իր հայ
րենակիցներուն վրայ կատարած է : օտար
ները միշտ գոհ ըրած է ի վնաս իրենե
րուն : Այսօր մեր մէջ բազմութիւ պատուա
ւոր եւ ուղղամիտ անձեր Հայոց հետ բնաւ
գործ չեն ըներ եւ օտարն է որ անոնց ու
կիները կը գրպանէ : Այս բանին պատճառը
մեծ ազաներուն օտարասիրութեանը մէջ
միայն փնտուելու չէ — թէեւ այս աստիճան
մը ճշմարիտ է — այլ ճանջեալու է թէ ա

տոնք վշտացած են, ցաւցած են Հայ հա
սարակութենէն : Հայ մեծատունը երբոր
գործառնութիւն մը կ'ունենայ իր ազգա
կիցներուն մէկին հետ՝ միշտ կը խաբուի եւ
ուստի զգուանքով եւ արհամարանքով երես
կը դարձնէ ասոնցմէ : Այս թերութեան մեր
մէջ գոյութիւն ունենալը նախ ընդունելու
ենք եւ ապա զայն բառնալու աշխատելու
ենք : Քողարկելը վնասակար է : բարոյական
քաջութիւն ունենանք եւ զայն թօթափե
լուն ճարը նայինք : Մէն մի անհատ իր
կողմէ իր անձնական պարտքը թող կատա
րէ որպէսզի այս նախատինք մեր վրայէն
վերնայ : Յարգենք մերինները օտարներէն
աւելի : Փոխանակ օտարները մեզմէ չ'հե
լու մերինները թող վատտկին : Մեր առեւ
տուրը որչափ որ կարելի է հայերուն հետ
ընենք եւ արհեստաւոր դասակարգն ալ թող
աշխատի օտարներէն աւելի իր Հայ յաճա
խորդները գոհ ընել : Վերջապէս թող այս
նոր դարուն մէջ փոխադարձ աջակցութիւ
նը իբր ազգային յատկանիշ մը, երազէ ի
րականութեան փոխուի :

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՒՆ
ՄՈՒՑՈՒԱԾ ԽՆԻՒՐԸ

Արժ. Տէր Գաբրիէլ Բահանայ Զէն
ճիւղէն հետեւեալ նամակին հրատարակու
թիւնը կը խնդրէ :

... Խմբագրութիւն
« Արշալոյս » Լրագրոյ
Աստ

Անցեալ տարի Պատ. Լրագրոյ 46 եւ 58
թուոց մէջ տեսնուած յօդուածներս եւ պաշտօ
նական գրութիւններս ընթերցողացդ յայտնի
են :

Սոյն հրատարակութիւններ իրարեւոյն այն
եղաւ, որ մեր ազգային վարիչներ, հանդէպ մեզ
զայրացան եւ սրտմտեցան, եւ սկսան խաւարի
մէջ ազգի ազգի միջոցներով վիրաւորել եւ վա
տահամբաւել զմեզ, բայց լուսոյ մէջ ճշմարտու
թիւնները չ'կրցան հերքել :

Գալով այս տարի վսեմ. վարչապետին եւ
րոպայէ դարձին, խնդրագիր մը եւս մատուցի
եւ յիշեցուցի 14-15 ամիսներէ ի վեր հոգեւորէ
անգամ զրկուած մնալու, եւ խնդրեցի որ՝ գոնէ
եթէ ո՛չ աստ, եզրպտոսի շրջակայ թէմօրէից
մէջ գտնուած մեր սղնէից հոգեւոր մատակարա
րութիւններ ի համար տնօրինութիւն մը ընեն
եւ՝ թէ՛ զիս եւ թէ՛ ցրուեալ ժողովուրդը հոգ
ւով միխթարեն : կրկին անխելի մնաց :

Եւ անա այժմ, որ մեր Գեր. Առաջնորդ
Սրբազաննիս եկած է, մէկ երկու տեսութեան
մէջ սրտիս խորհուրդները բացատրեցի եւ իմ
անկեղծ ծառայութեանս հատուցում, հոգեւոր

միջնորդութեան հայցեցի . յուսարեց զիս եւ ես յունուար ամսոյ զիջրները տեղւոյս ազգ . վարչութեան խնդրագիր մը եւս մատուցի . չորս շաբաթներ սպասելէ զինի , Գեր . Սրբազանէ կը տեղեկանամ թէ՛ քահանայի խապառ պէտք չունին եղեր :

Չայս պարտիմ ծանուցանել սիրելի եղբարցս ի Գրիտոսոս , ի միամտութիւն եւ ի հանրարտութիւն գայթակղեալ մտաց :

Եմ բարեմաղթու սիրելի Ազգես ԳԱՔՐԻԵԼ ԲՆՆՅ . Բ . ՉԷՆՃԻՐՃԵԱՆ 4 Փետր . 1901 . Գահիրէ (Եգիպտոս)

Պ . ԱՆԱԹՕԼ-ՓՐԱՆՍ ԵՒ ԵԳԻՊՏԱԶԱՅԵՐԸ

Նեղոսի եզերքներէն , Բուրգերէն ու Գարնաքի Տաճարէն գրական նիւթեր պաշարելու եկած այս Ակադեմական մեծ տաղանդին ու Հայապաշտպան Ֆրանսացիին՝ մեր ազգայնոց կողմէ համակրական արտայայտութիւն մը ցոյց տրուելու համար , մեր անցեալ թիւերովը հրաւեր ուղղուեցաւ մերազնէից :

Ուրախ ենք ծանուցանելու որ մեր առաջարկը մեր ազնիւ ազգայնոց շատերուն քով ընդունելութիւն գտնելով , բարեհաճեցան իրենց հաւանութիւնը մեզ աշտնել և նոյն իսկ գովել մեր նախաձեռնութիւնը . և՛ ըստ նախապէս եղած առաջարկի , կազմուեցաւ նախաձեռնարկ Մասնախումբ մը , հետեւեալ անձնաւորութիւններէն .

- Մեծ . Տիար Ա . Մ . Պէրպէրեան
- » » Ա . Չարեհեան
- » » Ա . Պալեան
- » » Յ . Շամլեան
- » » Յ . Բիւրքճեան
- » » Արմենակ Փափազեան
- » » Ս . Օտապաշեան :

Պատ . Մասնախումբը արդէն գործի ձեռնարկած է և համակիրներու կողմէ մինչեւ ցարդ - երկու երեք օրերու ժամանակամիջոցի մը մէջ - 10-12 եգիպտ . սակոյ մօտ գումար մը տրամադրուած է :

Պատ . Մասնախումբը որոշած է Պ . Ա . նաթօլ Ֆրանսի սեղան մը տալ և արծաթեայ գրիչ կաղամար մը նուիրել ուղերձով

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՇՈՒՐՉԸ

ԱԶԱՏ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԱԶԱՏ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Որոնց անցեալները ես ինքս ալ ենթա կայ էի :

Ոչ երբեք եւ ոչ ալ անուրջ մ'էր . այլ քաղցրը իտէալ մը , որ սրբազան պարտուցս շարքին մէջ , համակ հոգիս գրաւած էր :

Կ'զգայի թէ պարտք մը ունիմ . կ'ընդունէի թէ պէտք է գործել . ինչու որ դանակը ոսկորին հասած է . Մայր հայրենիքի թշուառութեան բաժակը լիապէս լեցուած է . անա վեհ գաղափարներ , որոնցմով պաշարուած էր միտքս , եւ յաճախ յափշտակուած կը գտնէի ինքզինքս . եւ չ'զիտեմ որչափ ժամանակ յափշտակութեանս գերին կը լինէի . զիս սթափեցնողն էր յոյս բառը

Այո՛ , յոյս կը գոչէի . պէտք է Հայաստանը լուսոյ վառարանի մը վերածել եւ այդ միջոցով փրկել զժբարդ Հայաստանի դաւակները , որոնք խաւարի ձերբաներուն մէջ կը տապալակին :

Ուրեմն իմ իտէալս յոյսն էր . սիրտս կ'ունենար , հոգիս կը խռովէր , երբ ճառագայթ մը ստեղծելու համար ամեն ջանքերս ապարդիւն կը մնային

մը , ի յիշատակ անոր ճամբորդութեան :

Հարկ չ'կայ ըսել թէ՛ Պատ . Մասնախումբը իր որոշումը իրագործելու համար գեռ պէտք պիտի ունենայ նոր համակիրներու . և գիտենք որ , շատեր պիտի վըշտանան իրենց ալ առաջարկուած չ'լինելուն համար , ուստի ընդհանուր կերպով հրաւեր կ'ուղղենք մեր ազգայնոց , որ փութան աշակցել այս տեսակ կարեւոր ձեռնարկի մը : Կը լսենք թէ՛ Աղէքսանդրիոյ ազգայինք ևս , քանի մը եռանդուն երիտասարդներու նախաձեռնութեամբ , նախօրինակ ցոյց մը ընելու պատրաստութիւններ կը տեսնեն : Կը յուսանք որ անոնց ալ մանրամասնութիւններն կը հաղորդուին մեզ ի հրատարակութիւն :

Պ . Անաթօլ Ֆրանս , որ այժմ վերին եգիպտոս կը գտնուի , կ'ըսուի թէ՛ մինչև ամսոյս 14ը պիտի վերադառնայ ի Գահիրէ : ԽՄԲ .

ՄԱՀԱԳՈՅԺ

Գրագէտներու հորիզոնէն կ'անհետին երկու գիտաւորներ ալ :

Անցեալ տարի Չիլոնիոյ հայրութիւնը հանդէսներով ու խրախմբութիւններով զբաղած էր , տօնելու համար Յորեւեան մը . այս տարի սգոյ և տխրութեան մէջ թաղուած է և կ'ողբայ այն մեծ ծերունին , որը կէս դարու մեղուաշան աշխատութեամբ և օգտակար հրատարակութիւններովը արժանացած էր իր համարումին և յարգանաց :

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ իսպառ կը բաժնուի իր համակիրներու երամէն , 1901 Յունուար 2/15 ին , անոնց շուրջ մեծ դատարկութիւն մը ձգելով :

Կրկնութիւն մը ընելէ զգուշանալու համար Մ . Մամուրեանի կենսագրական ծանօթութիւնները հոս զետեղել զանց կ'ընենք . քանի որ իր Յորեւեանին առթիւ հարկ եղածները խօսուած են արդէն , շատ աւելի ազդու կերպով :

Տիպին Ս . Տիւսուս ՓԱՇԱ ալ կը հե-

նթիւնըսուրկէն մեկնած ժամանակս Փարիզի միջազգային արուեստահանգէսը այցելած չ'լինելուս անհուն ցաւը մեղմացնելու համար , անցեալ օր երկու բարեկամներու հետ Կիզէի բուսաբանական ցուցահանգէսը այցելեցի . ամեն բան լաւ եւ ամեն բան կարգին էր :

Ա . և Բ . մրցանակը չէին խնայած մինչև անգամ սոխին ու սիստրին :

Հոս մարդ քարէ սիրտ ունենալու էր չ'ցաւելու համար . եւ վախկոտ մը ըլլալու էր չ'կատուելու համար . տեսնելով որ՝ հոս երկրագործը լիառատ կը վարձատրուի եւ մրցանակներ կը շահի , մինչդեռ Հայաստանի մէջ աշխատասէր ժողովուրդը կը կեղեքուի , կը հարստահարուի , կեանքը , ինչքը ու պատիւը վրայ կուտայ :

Լոյս իտէալս դարձեալ վրայ հասաւ . անձուկ մտքիս մէջ խաւարն ու յոյսը իրարու դէմ կը պատերազմէին . եւ այս խօլ պատերազմը այնչափ ազդած էր ըղիղիս բջիջներուն վրայ , որ այլ յայլմէ եղած , չէի տեսներ իմ շուրջս գլուխուած հրաշալիքները :

Վիթխարի ջրամբարձ մեքենաները՝ գնդասկղի չափ փոքրիկ կ'երեւային ինձ , որովհետեւ կ'ըսէի իւրովի թէ՛ Հայաստանի մէջ ջուրերը բարձրեմն կը հոսին եւ այդ մեքենաներէն հոն փոխադրելով , ոչինչ ծառայութիւն պիտի կրնամ մատուցանել :

Սինկէրի ինքնաշխատ մեքենաները , որոց մեծ տեղ արուած էր եւ ամենէն շատ կը հետաքրքրէին այցելուներն ու այցելուներն , հա-

տեւի Մ . Մամուրեանին , ինչպէս գրականօրէն հետեւած էր անոր « Հայոց Մը ձակատագրին » իր « Մայտան » գրելու ատեն :

Տիպին Տիւսուս Փաշա Լատին գերեզմանատան մէջ կ'երթայ հանգչիլ Յունուար 3/16 ին , վաղամեռիկ Տօրին անունով իր աշկան քով , մեզի թողլով իր հրատարակած երեք հատ գողտրիկ վէպերն « Մայտա » « Սիրանոյշ » և « Արաքսիա » :

Ստուգիւ անգարմանելի են այս կորուստները , գրական աշխարհին համար :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտոսի մէջ յիշատակելի ժամանակէ մը ի վեր , ազգային օրէնք և այլն ծալուած է :

Գործուած կարգ մը զեղծումներուն պատճառաւ , Հայ ժողովուրդեան մէջէն խըչխըչացող սրտերը մեծ թիւ կը կազմեն թէև , սակայն Ազգ . Օրինագրքի պակասէն , այդ քմահաճոյքներու դէմ մաքառելու ալ կը քաշուին . որովհետեւ օրինաց զէնքը կը պակսի իրենցմէ :

Նարակաշի ՀՐԱՏԱՐԱՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ , իրեն աւագ պարտականութիւն կը համարի Եգիպտոսեան Հայոց այդ թերին լրացնել , իւր անդրանիկ հրատարակութեամբը , որ ինչ ինչ բանաւոր պատճառներով Յունուար 20 էն ի վեր յապաղեցաւ :

Ամսոյս 12ին առաջին ֆօրման հրատարակ պիտի ելլէ ի գին կէս ֆրանքի : Բաժանագրագրութիւններու համար ամբողջ տետրին գինը 10 զրջ . ուլ կ'ստիկ է , յետ աւարտման երեք ֆրանքի պիտի վաճառուի :

ՀԱՅ ԱԶԳԻՆ վաղմի Բանաստեղծ-Հեղինակ Տիար Սիմոն Ֆէլէկեանիս ԱՅՍՈՒՆ և ՉԷՑԹՈՒՆ» անուն տաղաչափեալ ողբերգութեան տպագրութիւնը՝ մաքուր թուղթի վրայ և մաքուր տպագրութեամբ լրացաւ տասն ֆօրմայով , զոր ընթերցասէր ազգայնոց կը ծանուցանենք ի գիտութիւն :

ատտանի աշխատասէր տիկնանց եւ օրիորդաց մեծ ծառայութիւն մը չ'պիտի կրնային մատուցանել . որովհետեւ հոն ամեն ընտանիք ալ իր անական աշխատութիւնները աշխատաւորներու չ'յանձնէր . ու դարձեալ իմ իտէալս պաշարուեցաւ միտքս , որ էր Լոյս , Լոյս , Լոյս :

Այս մտազբաղ եւ ինքնամոռաց վիճակին մէջ ուսիս վրայ ձեռքի հարմար մը զգացի , հասկըցայ որ ընկերներէս մին բարեմտաբար իմ ուշադրութիւնս կը հրաւիրէ մեծ գոնգուածի մը վրայ

—Ահաւասիկ , ըսաւ , մեքենայ մը , որ երկրորդական յոյս կ'արագրէ :

Հիտաթափում մը տեղի ունեցաւ . փնտրուածս գտած էի . միայն կը մնար դիտանալ թէ այդ լուսարտադրիչը ինչ լոյսեր կը ծնի : Այդ ալ դիւրին հղաւ . յաղթանդամ մեքենավարը օղակ մը շտրթելուն պէս . սուրում մը յտնաջնկաւ սկանջ խաղցնելու ատիճան ու յետոյ մեքենաները միահամուռ շարժման մէջ էին : Հոս զարուար լոյսեր մէջէն վրանցան եւ լուսոյ ուղղութիւն մէջ աչքեր կը շարժային , եւ ինչ բանէ տոնջ կուգային այդ հաղաւոր լոյսերը —երկաթէ , պղնձէ եւ արդրէ . կը մնար մեքենաները շարժելու ուժը . այդ ալ կարելի էր նփրատի եւ Տիգրիսի ջուրերուն միջոցաւ ձեռք բերել :

Ո՛վ սքանչացմանս , գտա՛յ գոչեցի . իտէալս իրագործուած էր , Կեցցէ՛ Հայաստան , որ յետ աշուտ առատ յոյ-

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 4 Փետրուար . — Լորտ Քիչնէր հետեւալը կը հեռագրէ Բրէթերիայէն երէկուան թուականով .

«Քումբէլ, յարձակած և ետ մղած է 500 Պօէր, Մէտաբըլպուրի հարաւակողմը : Տեղակալ Քաուսթըն (18րդ . Հիւսարներէն) սպանուած է . նմանապէս 18 զինուորներ սպանուած և վիրաւորուած են : Պօէրները Զօրավար Փրէնչէն 4 շրջուն հիւանդանոց առած են Պէթհէլի մօտերը վիրաւորեալները փնտռելու պահուն : Մօտաբըլպուրի կորուստն 2 սպայ սպանուած և 2 սպայ վիրաւորեալ . Զօրավար Փրէնչ, Պօէրները արեւելք մղած միջոցին, 15 նոց թնդանով մը առած է և ուրիշ մըն ալ ոչնչացուցած է . Քար մտնող գօմնանտօները ամեն կողմ մերիններուն կը բաղխին : Քիչնէր Սիւառքները Տունպրիճի մօտ 100 Պօէր ետ մղած են և սպայեր ու ռազմավորները գրաւած են : Հէյկ կեղծոնի գօմնանտօն դէպի Սթէյթըրիլ կը մղէ : Տը Ուէթ՝ Տը Ուէթըստօրի հարաւակողմը կը գտնուի :»

Ս . Բէթէրսպուրի 4 Փետրուար, — Նիւսի մէջ ձերբակալուած իշխան Նաքահեցիների քով գտնուող թղթերով կը հաստատուի թէ՛ Զարին կենաց դէմ գաւազրութիւն մը սարքուած է . հոս և Մօսքուա 7 հոգի ձերբակալուած են :

Քէյթթաուն 4 Փետրուար . — Նոր արշաւանքի մը կ'սպասուի իւր հետեւանք Օրանտի գաղութին մէջ գործող բազմաթիւ Պօէր գօմնանտօներու զուգարէպ շարժումներուն : Օրանտի հարաւակողմեան պահակազօրքերուն ազգարարուած է զգուշ և ակնդէտ կենալ : Քարի կառավարութիւնը Փետրուար 1ին յայտարարութիւն մը հրատարակած է, որուն մէջ Բիչտանացի բնակիչներուն կոչում կ'ընէ, կառավարութեան ձեռնառու լինել մօտալուտ մեծ արշաւանքին ատեն :

Իրազմավայրի զօրքերը ամսոյս 2ին Քլանվիլիաի մօտերը Պօէր գունդի մը հանդիպած են, 5 ժամուան կռիւէ մը յետոյ,

սով իր փրկութիւնը ձեռք պիտի բերէ . և ընկերներս թողլով, ցուցանալիս զուսէն գորս խոյացայ :

Յանուած արտեր, կանանչ խոտեր կոխատելով մինչև սենեակի հոսոյ . ունեցած չուսնեցան հաւաքեցի և պայուսակի մէջ գետնեցի ու դէպի կայարան կը վազէի, վերջին ձեւը պրնթացին հասնելու համար : Յանկարծ մարդ մը դէմ ելաւ և քաղաքավարութեամբ ինքզինքը ներկայացուց . իրմէ վերջ Զարքը լինելու ծանուցանելով . . .

Այդ թիւէն առանց ոչինչ հասկնալ կարենալու, շատ լուռ ըսելով՝ օճիքս ազատել կուզէի :

— Մնաք բարով ըսի . բայց ձեռքս բռնած թող չէր տար :

Ներողութիւն խնդրեցի — մերժեց :

Դժգոհութիւնս յայտնեցի — վաղը կրնաք մեկնել ըսաւ :

— Կարելի չէ՛, ըսի, և ոչ իսկ ժամ մը կորսնցնել, և դէպի նպատակ կը վազեմ, Հայաստանը պիտի լուսաւորեմ որ միանգամ ընդ միշտ փրկուի :

— Արդէն մենք ալ մեհեռոյն նպատակը ունինք :

— Ի՞նչ նպատակ, Ձեզի ո՞վ ինչ ըսած է :

— Պարտնը յանձնարարեց որ Ձեր աջակցութիւնը խնդրեմ մեր իտէալի գործադրութեան :

— Ի՞նչ . իտէալ . ինչ ըսել կ'ուզէք :

— Այս ա՛յն իտէալն է, որ ամեն հայ պարտի ունենալ :

Պօէրները իրենց գիրքերէն վճարուած են, բայց մառախուղին թանձրութեանը համար, անկարելի եղած է անոնց հետապնդել : Ուրիշ կռիւ մ'ալ տեղի ունեցած է Տուրն-Բիվըրի մօտ :

ՏՕՐԹ ԲՍՐՆՓԷԼՏ

ՎԱՍՅՅԱԼ ՎԻՆՆԱՅԻ ՀՍՄԱԼՍԱՐԱՆԷՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիեննայի գըլխաւոր հիւանդանոցներուն : Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց, Գաղղիական արտի, կեկորզի, քիթի և բերնի հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ մամր 10 և 12, իսկ կէս օրէ վերջը ժամը 3 և 5, իր տունը Շէրիֆ փաշա փողոց, ԱՂԵՔԱՆՆԻՐԻԱ :

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

ԹՐԱՆՍՎԱԼ

Լոնտոնէն Յունուար 30 թուականաւ ստացուած հեռագրէ մը կը տեղեկանանք թէ՛ Տը Ուէթ կը ջանայ կրկին Քար արշաւել : Զօրավար Զարլս Նօքս Թապանչուէն 40 մղոն հեռու կուռած է անոր հետ, սակայն դեռ այս կուռ մասին մանրամասնութիւններ հասած չեն :

Պօէրները Մօտաբըլպուրի և Վան Ռէնի հանքերուն մեծ փնտնեք հասցուցած են . հրամանատարը և երկու ուրիշներ գերի վարած են :

Միւսնոյն թուականաւ Քարէն լուր կը տրուի թէ՛ անգղիացի զօրավարները հրաման ստացած են, արշաւողները ետ մղելու համար զինուորական գործողութիւններու ձեռնարկել :

Շատ լեռնաւ երկրի մը մէջ, գօմնանտօներուն տարադնածութիւնը և բնակիչներու Պօէրներուն օգնելու և լուրեր հազորդելու համար ցոյց տուած տրամադրութիւնը, անգղիացի զօրավարներուն գործը շատ պիտի դժուարացնեն :

— Քարէն ստացուած ուրիշ հեռագիր

Ուզեցի մեկնել, բայց դարձաւ թող չը առաւ :

Փախչիլ մտածեցի, կառչեցաւ մնաց :

Ճեպընթացը յիշելով կուռիս կը պատրաստէի այդ անտանիլին պէտք եղած հարուածը տեղաւորելու համար, բայց ուրիշ չորս հոգի ետ չըլլալուստեցին զիս և հանդարտեցուցին ըսելով թէ՛ կառախուսման ալ արդէն մեկնած է, թէ իրենք նոյն իրիկուրը ազգին սիրոյն համար ժողով ունին, թէ իրենք 20 անձինք են և թէ՛ զիս ալ իրենց հետ առնելով 21 ի պիտի բարձրացնեն այդ թիւը, թէ՛ իրենք ալ վտան են իմ իտէալի օգտակարութեան վրայ :

Այս փողաբշական խօսքերը, ինչպէս շատերու, ինձ ալ հպարտացուցին և մտքիս մէջ հազար ու մէկ բանաձեւեր կը պատրաստէի իրիկուսան ժողովին իմ Լոյս ի օգտակարութիւնը պարզելու համար :

Լուսոյ օգտակարութիւնը արդէն ընդունուած ճշմարտութիւն մ'է . ուստի ես ալ ո՛ր եւ զժողովութիւն չ'կրեցի պերճօրէն բացատրելու համար իմ իտէալս, որ շատ անգամ ծափահարութիւններու ալ արժանացաւ :

Յստակ կերպով բացատրելու առիթը ունեցայ նաև հայրենիքի դժբաղդութիւններ և մեր կորստներուն կրած տառապանքներն . ամէնքն ալ յուզուեցան . բացատրեցի թէ՛ պղինձի, արոյրի և երկաթի միջոցաւ յոյս արտադրելով իմ արեւակիցներս պիտի լուսաւորեմ և անոր հետեւանքը պիտի ըլլայ հրաշալի ազատութիւնը :

մը կ'իմացնէ թէ՛ Պօէրները Վաթաւան անցած են :

Պէթօմֆօնթային փետրուար 1 թուականաւ առնուած հեռագրիցները Պօէրներուն շատ նպաստաւոր հանդամանք մը ունին : Օրանտի հիւսիսակողմէն և հիւսիսային արեւելքէն բաղնաթիւ գօմնանտօնը դէպի հարաւ կ'արշաւեն . թէև անգղիական զօրքերը ջանոնք կը հետապնդեն :

— Միւսնոյն թուականաւ Լոնտոնէն առնուած լուրերէն կ'իմացուի թէ՛ անգղիական կառավարութիւնը Լորտ Քիչնէրը ետ կանչելու վրայ կը մտածէ :

— Քէյթթաունէն կը հազորդեն թէ՛ զօրավար Պէթհոնի և զօրավար տը Լիլի հրամանատարութեան տակ եղող գունդերը Քլանվիլիամ հասած են և քիչ ատենէն գործողութիւնները պիտի սկսին : Արշաւողները ետ մղելը շատ դժուար գործ պիտի ըլլայ . որովհետեւ երկիրը դարաւիտ է և Պօէրները մեծ թիւ կը կազմեն . անկարևոր յառաջամարտեր կը մղուին ամեն օր դադարութեամբ զանազան կէտերուն վրայ :

Թիլիֆիլի

— 4 . Պօլսէ 29 Յունուար թուականաւ առնուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ կալթայի և Պօլսոյ բոլոր թաղերուն մէջ պատերուն վրայ փակցուած ձեռագիր յայտարարութիւններ գտնուած են, որոնցմով Սուլթանին դէմ ապստամբելու կոչ կը լինի ժողովրդին :

— Թայնզ Կրէտէի կացութեան վրայ գրած իր մէկ յօդուածին մէջ կ'ըսէ թէ՛ Սուլթանը տրամադիր է Կրէտէի համար Պուլկարիոյ նման կառավարական դրութիւն մը ընդունել . միւսնոյն ատեն Թա Սլ կը հաւատայ թէ Կրէտայիք պիտի մերժեն ընդունել նմանօրինակ կառավարութիւն մը, և պիտի պնդեն իրենց Յունաստանի հետ միացմանը վրայ :

— Մեծ Վէզիր Խալիլ Իֆթալթ Փաշա մեռած է : Պէրլինի Մախուր անոր փրայ շատ գովեստալից բաներ կը գրէ :

ՆՈՐԱՉԵԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ . — Ալ հրապարակէն թող քաշուին

Ամենքն ալ շո՛ւք ընելով խնդացին . մէկը յիմար է ըսաւ, ուրիշ ժը ապուշ . երբորք ժը զիվզեկ . ու անգիէն պտաւ մ'ալ գժուած է ըսելու կը պատրաստուէր :

Իսկ ես արդէն ամօթէս ամեն բան եղած էի և փախչելու ճար մը կը մտածէի, երբ ճամբան զիս բռնագատող պարտնը վիհափառօրէն ոտքի ելլելով լուրթիւն պատուիրեց և ժպտագին ներողութիւն խնդրեց ինձմէ, իմ մտախոխութեան համար :

Այսպիսի բարերար օժանդակութիւն մը տեսնելով, ոտք ելայ և եմ երախտագրտական զգացումներս արտայայտելու համար դէպի զիս գովարանողն ուղղուեցայ և կուզի ձեռքը համբուրել . բայց մերժեց, առաքելով որ ես տակաւին զաշնակից բարեկամ լինելու երդումը տուած չեմ :

— Ի՞նչ դաշինք է, ըսէ՛ք, պիտի երդնում պատասխանեցի :

— Այո՛, պիտի երդնուս, որովհետեւ մեր գաղինքներէն դուրս հայուն փրկութիւն չ'կայ : Ազգ մը, ըսաւ, նախ պէտք է ինքզինքը ճանչնայ և գործնականապէս յառաջդիմէ, ետ քեզ հետ եմ, անիոր՛ձ պատանի . այո՛, այո՛, Լոյս պէտք է, բայց ոչ ելլաքորական, այլ՝ մտաւորական լոյս . մտքի ու գաղափարաց յեղաշրջում, կենսի յեղափոխութիւն, ուրիշներուն օրինակ լինել պէտք է . եթէ ամերիկացիները չ'յաջողուցան, ես շատ գոհ եմ որ մենք հետզհետէ պիտի յաջողինք . Գաղիացիք շատ սխալ են, երբոր liberte եւ fraternite կ'ըսեն : Ես իտէալիսը եմ :

Էփիթալ, Միշուալ; Ինիսն, Ռուիս և այլ կենաց և ընդից ապահովագրական ընկերութիւնները, քանի որ Սէլանիկի մէջ գողերը ընկերութիւն մը կազմած են տեղւոյն բնակչաց ապահովութիւնը երաշխաւորելու համար:

Սէլանիկի նորակազմ ապահովագրական ընկերութեան պայմանները յոյժ գիւրամատչելի են եղեր. ահա թէ ինչպէս:

Ո՛վ որ այդ ընկերութեան նախագահ-Աւազակագետին ամսական երեք ֆրանք տալ յանձն առնէ, այլ ևս կրնայ ապահով ըլլալ թէ՛ իրմէն երեք բան մը չպիտի գողցուի և հակառակ պարագային մէջ գողերու ընկերութիւնը պատասխանատու պիտի մնայ:

Սուլթան Համիտի շահատակութիւններէն վերջ ծնունդ առած այսպիսի ապահովագրական ընկերութիւն մը՝ պէտք չէ որ վարմանը պատճառէ մեղի. որովհետեւ ասոնք գոնէ աս՝ առաւելութիւնը ունին որ աւազակ անունին տակ յայտնի կը գործեն և ո՛չ թէ՛ ժողովուրդը կառավարելու հոգը ստանձնած են և կառավարութիւն անունով զայն կը կեղծքեն ու արիւնը կը խմեն...

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 27 ՅՈՒՆՎԱՐ 1901

Table with 6 columns of numbers: 2580 8973 0474 2101 0004 0549, 1672 1992 2057 2092 2122 2139, 2467 3099 3306 3338 3497 3623, 3693 3711 4984 5057 5280 5302, 5421 5498 5995 7190 7220 7983

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԿԱԹ 1 ՓԵՏՐՈՒՄ 1901

Table with 6 columns of numbers: 7169 6303 233 288 7886 890, 1535 1956 2067 2423 2523 2640, 3029 3323 4993 5954 5961 6639, 7587 7917 8105 8253 8299 8313, 8331 8962 9506

Եւ իմ իտէալ է ազատութիւն, ինչ որ եղբայրուրիւն: Մենք էրիկ մարդերու այս սկզբունքը զանց ըրած, մեր ազգի կառավարութիւնը մեր ձեռքին մէջ առնելով՝ չորս պատմական հարստութիւններ - Հայկազեան, Արշակունեան, Բագրատունեան, Ռուբինեան - կործանեցին, երբ չհաշուենք յեղափոխական երկու կուսակցութիւններն, Հնչակ և դրօշակ:

Սիրելի քո՛րք եւ եղբա՛րք, ես կ'առաջարկեմ որ երկու սեռին հաւասար իրաւունք տրուի « առանց ֆորսի եւ ֆրաֆի խտրութեան » ազգին շահերը պաշտպանելու, եւ, ու՛ր տեսնուած է այդ անձոնի խտրութիւնը: Վայրի գազաններն անգամ չ'ունին. դաշտերը ելէ՛ք, պիտի տեսնէք որ թռչունները խառն կ'ապրին, կովերն ու եղջեր խառն կ'արածին. հաւեր ու աքլորներ խառն կը շրջին. այնպէս չէ՛ անփորձ պատանի:

—Այո՛, ըսի, յիշելով բուսաբանութեան արուեստանախդիսի պաշտին մէջ գետեղուած վանդակները, ուր շատ մը ընտիր հաւեր ու աքլորներ միասին ի ցոյց դրուած էին:

Երկու օր առաջ դարձեալ տեսայ զինքը. կ'ըսէ որ, եթէ ժողովին օրը ձեռնոց ունենար, կանանց խառն մասնակցութիւնը մերժող պարոնին պիտի նետէր:

Ես ալ միթաքեցի զինք... Բ. ՎԻՇՍՊ

Տպագրութիւն ԺԳՊՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պաշարի փողոց. Խաղնետարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ներն են ևւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է:

400 է աւելի վկայականներով եւ մեքայններով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ,


ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախդիսին մէջ ստացած է:

ՀԱՌՄԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՅ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՌՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԽՏԻՎԱԿԱՆ ՏՆԱ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ Ի յատկանշին:



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախողաց տուններուն մէջ:

Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ

ՄԱՆԿԱԲԱՐՉ ՏԻԿԻՆ ՍՈՍԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ Եարա-Ապսիզ-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն փոխադրած է Եարա Ապսիզ Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց, Ահմէտ պէյ Ապսիզ Բազիլի 20 թիւ սեփականութեան մէջ:

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ և յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով՝ դահիրէրնակ ազգայնոց ևւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարուել իւր խնամոցը պէտք ունեցողներուն:

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում:

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒ

Ի՞նչի որ ՍԷՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՆԻ նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է: Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՆԷ սկսեալ մինչև 2500 ՂՆԷ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և ուր սիտէ ժամացոյցներ. պատի և ըծու լի սուղ մնալան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեալ Ֆոնօկրաֆներու:

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀՈՒ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՄՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵՍ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեաներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեաներուն արդէն վճարած է կամ ինչպատիրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այսարհի ուրիշ օր և է ընկերութեան մէկ միլեար աւելի է:

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ Ի Գահիրէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՋԱՌԱՏՈՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ ԿԻՐԱԿԻ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՐԸ Օսկանիյէ դեղարանին դիմացի փողոցին մէջ:

Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին:

Այցեխարտեր, Երջաքերախաւաններ, Գիրքեր, Հրախրաքեր, Մանաղղներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններն կը վաճառուին հետեւեալ գրքերն:

- 1. ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ:
2. ՈՐՔՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիս մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է եղեր:
3. ՀԱՒԱՔԱՐՏՈՑ հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տիորինութեամբ Տ. Լևոն Եղիազարեանցի:
4. ՉՈՒՐՃԱԼԻ Անիքթոններ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

Աշխարհի մէջ գտնուող շուրջ օր և է լինկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՕՆ գլխաւոր գործակատար յԱզգաբանագրիս